



COVID-19-ի դեմ Պատվաստում. Հաճախ Տրվող Հարցեր ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ



Ինչո՞ւ է կարևոր պատվաստվելը

COVID-19-ի դեմ պատվաստումը պաշտպանում է մարդկանց COVID-19-ի հետևանքով ծանր հիվանդանալուց և հիվանդանոցում հայտնվելուց կամ մահանալուց: Այն նաև նվազեցնում է COVID-19-ով (օրինակ՝ երկարատև COVID) քրոնիկորեն հիվանդանալու և աշխատանքից ու դպրոցից բացակայելու վտանգը:

Բացի այդ, պատվաստումը նվազեցնում է COVID-19-ը ուրիշներին փոխանցելու վտանգը: Սա հատկապես օգտակար է [ծանր հիվանդանալու ավելի բարձր վտանգի խմբում](#) գտնվող մարդկանց պաշտպանելու համար:

Խորհուրդ է տրվում, որ մարդիկ, ովքեր նախկինում վարակվել են COVID-19-ով, այնուամենայնիվ պատվաստվեն՝ ամրապնդելու համար իրենց անվարակուսակությունը և նվազեցնելու COVID-19-ի հետևանքով հիվանդանոցում հայտնվելու վտանգը:

Որքա՞ն լավ են գործում պատվաստանյութերը

COVID-19-ի դեմ պատվաստանյութերը շատ լավ են գործում COVID-19-ի հետևանքով ծանր հիվանդանալուց, հիվանդանոցում հայտնվելուց և մահից պաշտպանելու հարցում: COVID-19-ի դեմ [բոլոր պահանջվող դեղաչափերը ժամանակին ստացած](#) անձանց համեմատ, չպատվաստված անձինք [ավելի մեծ հավանականությամբ կվարակվեն COVID-19-ով](#), ավելի մեծ հավանականությամբ COVID-19-ի հետևանքով [կհայտնվեն հիվանդանոցում](#) և շատ ավելի մեծ հավանականությամբ [կմահանան COVID-19-ից](#):

Ինչպես բոլոր պատվաստանյութերը, COVID-19-ի դեմ պատվաստանյութերը 100% արդյունավետ չեն վարակը կանխելու հարցում: Որոշ մարդիկ, որոնք սահմանված ժամանակում ստացել են COVID-19-ի դեմ պահանջվող բոլոր դեղաչափերը, կարող են հիվանդանալ COVID-19-ով: Սակայն, եթե դուք ժամանակին ստանաք բոլոր պահանջվող դեղաչափերը և իսկապես վարակվեք, ապա ավելի քիչ հավանական է, որ կհիվանդանաք, իսկ հիվանդանալու դեպքում՝ ավելի քիչ հավանական է, որ ծանր կհիվանդանաք կամ կմահանաք: COVID-19-ի դեմ բոլոր պահանջվող դեղաչափերը ժամանակին ստանալը նվազեցնում է հիվանդությունը ուրիշներին փոխանցելու հավանականությունը և մեծացնում է ձեր պաշտպանությունը COVID-19-ի հարուցիչ վիրուսի՝ SARS-CoV-2-ի նոր ենթատեսակներից:

Գիտության և վիրուսի զարգացմանը զուգահեռ՝ պատվաստանյութերի վերաբերյալ առաջարկությունները նույնպես ավելանում են: Գիտնականները և բժշկ-փորձագետները շարունակում են ուշադիր հետևել տարբեր տարիքի և վտանգի տարբեր գործոններ ունեցող մարդկանց դիմադրողականության նվազման նշաններին: Նրանք նաև հետևում են, թե որքան լավ են պատվաստանյութերը պաշտպանում վիրուսի նոր ենթատեսակներից:

Ո՞ր պատվաստանյութերն են հասանելի Միացյալ Նահանգներում

Միացյալ Նահանգներում հասանելի են COVID-19-ի դեմ չորս պատվաստանյութեր: Դրանք պատրաստվում են Pfizer-BioNTech (ապրանքանիշի անվանումը՝ Comirnaty), Moderna (ապրանքանիշի անվանումը՝ Spikevax), Janssen/Johnson & Johnson (J&J) և Novavax ընկերությունների կողմից: Pfizer և Moderna պատվաստանյութերը թույլատրված են 6 ամսական և ավելի բարձր տարիքի անձանց: J&J և Novavax պատվաստանյութերը թույլատրված է միայն 18 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց:





COVID-19-ի դեմ Պատվաստում. Հաճախ Տրվող Հարցեր ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ



CDC-ն այժմ խորհուրդ է տալիս COVID-19-ի դեմ Pfizer, Moderna և Novavax պատվաստանյութերը J&J պատվաստանյութի փոխարեն, քանի որ J&J պատվաստանյութի հնարավոր վտանգները, թեև հազվադեպ են, սակայն ավելի մեծ են, քան մյուս պատվաստանյութերի վտանգները:

J&J պատվաստանյութը դեռևս հասանելի է՝

- Նրանց, ովքեր չեն կարող ստանալ Pfizer, Moderna կամ Novavax պատվաստանյութը առողջական պատճառներով (օրինակ՝ ծանր ավերգիկ հակազդեցություն պատվաստանյութի բաղադրիչի նկատմամբ):
- Նրանց, ովքեր նախընտրում են դա՝ անկախ անվտանգության հետ կապված մտահոգություններից: Իմացեք ավելին հետևյալ կայքէջում՝ [COVID-19-ի դեմ Johnson & Johnson's Janssen Պատվաստանյութի Ընդհանուր Ակնարկ և Անվտանգություն](#):

Ավելին իմանալու համար այցելեք CDC-ի [Ժամանակին Ստացեք COVID-19-ի դեմ Բոլոր Պահանջվող Դեղաչափերը](#) կայքէջ:

Որտեղի՞ց կարող եմ ստանալ լրացուցիչ տեղեկատվություն



- Այս ՀՏՀ-ն կամ COVID-19-ի դեմ պատվաստման այլ թեմաների վերաբերյալ ՀՏՀ-ները տպելու կամ տեսնելու համար սկանավորեք QR ծածկագիրը կամ այցելեք [COVID-19 -ի դեմ պատվաստման ՀՏՀ-ները](#) կայքէջ:
- [VaccinateLACounty.com](#)՝ ներառյալ [COVID-19-ի դեմ Պատվաստման Ժամանակցույցը](#), որն աղյուսակներով ցույց է տալիս պատվաստման յուրաքանչյուր դեղաչափի ընդունման ժամանակը և տեղեկություններ է տրամադրում այն մասին, թե [հնչալես Պատվաստվել](#):
- CDC-ի՝ [COVID-19-ի դեմ Պատվաստանյութեր](#) կայքէջ:
- Հարցերի դեպքում խոսեք ձեր բժշկի հետ

